

ПЕПО. Бытовая комедія въ трехъ дѣйствіяхъ Габріела Сундукьянца. Пер. съ арм. А. Цатуріана и Ю. Веселовскаго со вступительною статьей Юрія Веселовскаго. М. 1896.

Պ. Լ. Ծառուբեան և Ի. Վեսելովսկին Հայ հասարակութեան արդէն ծանօթ անձինք են. առաջինը մեր երիտասարդ բանաստեղծների դասում պատուաւոր տեղ է գրաւել արդէն, իսկ պ. Վեսելովսկին յայտնի է իւր յօգուածներովն Հայոց նոր գրականութեան մասին, ծանօթ է նաև իրրև թարգմանիչ Հայ բանաստեղծների և իրրև խմբագիր (պ. Մ. Բերբերեանի գործակցութեամբ) Армянские Беллетристы ժողովածուի, Արդ. պպ. Ծառուբեանն և Վեսելովսկին ընդհանուր աշխատութեամբ ծանօթացնում են սուսաց հասարակութեանը մեր համակերպի թատերագույն Գ. Սունդուկեանցի լաւագոյն կատակերգութեան՝ «Պէպոյի» հետ, և այդ գործի համար նոքա արժանի են մեր շնորհակալութեանը, Մի ազգ ճանաչելու ամենալաւ միջոցներից մէկը նորա գրականութեանը ծանօթանալն է, և այդ տեսակետից մի ազնիւ պաշտօն է ստանձնել պ. Ի. Վեսելովսկին Հայոց վերաբերութեամբ, աշխատելով սուս հասարակութեան մէջ Հայ ազգի մասին ճիշդ տեղեկութիւններ տարածելուն նպաստել:

«Պէպոյի» թարգմանութիւնը կարող ենք յաջող համարել, աչքի առաջ ունենալով այն դժուարութիւնները, որ ամէն թարգմանչի համար պիտի ներկայացնեն անշուշտ Սունդուկեանցի կատակերգութիւնները, Մի փոքրիկ նկատողութիւն սակայն, որ հարկաւ աւելի Պ. Ծառուբեանին կը վերաբերի, որովհետև նա է Հայոց կեանքին ծանօթը, Թիֆլիզցի կանանց «ղաթիբան» Երևանի նահանգի կանանց «քաթիբան» է, այլ «չարսաւը», որ այժմ էլ Հայ կանայք Երևանում, Վաղարշապատում և ըն ձգում են եկեղեցի գնալիս. катиба — накидка съ рукава. և չէ, որ կարելի է ծախել «նահալի» տակ գնել և որ սովորաբար սպիտակ է լինում, նմանապէս «խարազի» քօշ կամ լափշին այն կօշիկը չէ որ խարազներն են գործ անում, այլ խարազի կարածը:

Գետնափորի երեսաները, Վ. Կորօկենկոյի(ոյի). Թ. 1893. հր. Թ. Լ. Հրատ. Ընկ. № 104.

Երկու Վէպիկ. I. Վրէժ, Գ. Դը Մօպսանի. II. Հիւանդապահ աղջիկը, Փր. Կօպպէի. Թարգմ. Լևոն Մ. Ա. Թ. 1896. հր. նոյն № 105.

Ակամայ մարդասպան. Վ. Կորօկենկո. Թարգմ. Տ. Յովհաննիսեան. Թ. 1896. հր. նոյն № 106.

Աներևոյ շողագործ (Կարմիր ճիճու). Ռուս. փոխ. Լ. Մելիք—Աբամեան. Թ. 1896. հր. նոյն № 108.

Հրատարակչական Ընկ. այս հրատարակութիւնները մենք անշուշտ հետաքրքրելի և օգտակար ընթերցանութեան նիւթ պիտի համարենք «մեծ» հասարակութեան համար. թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ լեզուի այս գրքոյնները Ընկ. յաջող տետրակների կարգը պիտի դասուին, Սակայն չենք կարող այստեղ իսկ չյայտնել մեր ցանկութիւնը, որ Հրատ. Ընկ. աւելի լուրջ հրատարակութեանց հետամուտ լինէր շարունակ, այնպիսի հրատարակութեանց ենք ասում, որ գրականութեան համար որ և է նշանակութիւն ունենային. թող այդպիսի հրատարակութեանց թիւը տարուան ընթացքում մի քանի անգամ պակաս լինի Ընկ. այժմեան տարեկան հրատ. թուից, փոյթ չէ. դորանով Ընկ. վարկը կարծում ենք աւելի կը բարձրանար, քան թէ կը նուազէր, 5—10 կոպ. տետրակներ այսօր ամէն դր հնար ունի լոյս ընծայելու, և իրօք այդպիսի տետրակներ բաւական չափով տպագրուում էլ են Հրատ. Ընկ.-ից անկախ:—

Ա. Սմիթնոյա. Անտառապահը. Թարգմ. ռուսերէնից. Թ. 1896.

Այս գրքոյն էլ բաւական յաջող թարգմանութիւն լինելով ռուսերէնից՝ իւր բարոյական բովանդակութեան շնորհիւ կարող է օգտակար լինել երեխայոց, մանաւանդ փոքրահասակների համար, Տիպը և թուղթը մաքուր, գինն էլ մատչելի է—12 կոպ.

Թ. Թ.

